Արձանագրություն N 02

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-25/25» ծածկագրով ԳՀ մրցույթի գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի 06 օգոստոսի, 2025թ, ժ 16:00,

«Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ, Շիրակի մարզ,

ք. Գյումրի, Վարդանանց հր. 1

Հանձնաժողովի նախագահ՝

1) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Հովիկ Ղազարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետի օգնական,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

1. «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-25/25» ծածկագրով ԳՀ-ի միջոցով մրցույթի առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին հրավերը 30.07.2025թ. էլեկտրոնային եղանակով տեղադրվել է www.gnumner.am հասցեում:

1.2 «Գյումրու համայանքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կարիքների համար ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ձեռքբերման համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-25/25» ծածկագրով ԳՀ-ի համաձայն գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Մասնակցի | |
|---|---|
| Անվանումը | Հասցեն |
| «ՄԻԿԱՆ» ՍՊԸ | ՀՀ ՇՄ Ք. Գյումրի, Գործարանային նրբ. 21 |
| «ԱԳԷԱ» ՍՊԸ | ՀՀ ՇՄ Ք. Գյումրի, գ. Ախուրյան |

*1.4 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.*

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը ներկայացրել է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ: Փաթեթում ներկայացված փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ – 0*

## 1.6. Մասնակիցների առաջարկած գները

| | Ծառայության անվանումը | «ՄԻԿԱՆ» ՍՊԸ | | «ԱԳԷԱ» ՍՊԸ | | Նախահաշվային գին |
|---|---|---|---|---|---|---|
| | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ-ն | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ-ն | ներառյալ ԱԱՀ ն |
| 1. | ՀՀ Շիրակի Մարզ Գյումրի համայնքի Ստեփան Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնի շենքի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | **290 000** | **290 000** | **320 000** | **320 000** | 326 966 |
| 2. | ՀՀ Շիրակի Մարզ Գյումրի համայնքի Երիտասարդական պալատի շենքի վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | **900 000** | **900 000** | **1 100 000** | **1 100 000** | 1 170 041 |
| 3. | ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնք Շահումյան 214/5 հասցեում գտնվող Մարմնամարզական Մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | - | - | **4 000 000** | **4 000 000** | 4 144 525 |

Հանձնաժողովը արձանագրեց՝

- «ՄԻԿԱՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաթեթում բացակայում էր հրավերով պահանջվող **Մասնագետների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները /մասնավորապես՝ պետք է ներկայացվեն անձնակազմի բոլոր անդամների կողմից պայմանագրի կատարմանը մասնակցության հավաստում՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, պայմանագրի կատարման համար ներգրաված բոլոր մասնագետների ինքնակենսագրականները՝ հավաստիությունը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված տվյալ անձի կողմից:**
- «ԱԳԷԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաթեթում բացակայում էր հրավերով պահանջվող **Մասնագետների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները /մասնավորապես՝ պայմանագրի կատարման համար ներգրաված բոլոր մասնագետների ինքնակենսագրականները՝ հավաստիությունը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված տվյալ անձի կողմից:**

Հանձնաժողովը որոշեց՝

- «ՄԻԿԱՆ» և «ԱԳԷԱ» ՍՊԸ-ներին ծանուցել՝ հրավերի նկատմամբ անհամապասխանությունը շտկելու վերաբերյալ: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշման 41-րդ կետի համաձայն անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ուստի անհրաժեշտ է 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

- **Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետ նշանակել սույն թվականի օգոստոսի 08-ի, ժամը 18:00-ն, ժամկետի ավարտից հետո ներկայացրած փաստաթղթերը չեն ընդունվում:**
- **Եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:**
- **Հաջորդ նիստը նշանակել 2025 թվականի օգոստոսի 09-ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ ..... Ավետիս Առաքելյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝ ..... Դմիտրի Մանվելյան (ԳՊ/ԳԱ)

..... Դավիթ Հարությունյան (ԳՊ/ԳԱ)

..... Հովիկ Ղազարյան (ԳՊ/ԲԱ)

..... Հրաչիկ Վարդանյան (ԳՊ/ԲԱ)

Քարտուղար՝ ..... Արմինե Սարգսյան (ԳՊ/ՄՀՄ)